



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

34
0-48



84-3.
P-48

11166

45


Է Դ Մ Օ Ն . Թ Ե Ռ Ի

Վ Ա Ր Ժ Ա Պ Ե Տ Ը



Ֆրանս. թարգմ. ԼԵՒՈՆ Մ.-Ա.Գ.

||



Թ Ի Ֆ Լ Ի Զ

Տպարան Տ. Մ. Ռօտինհանցի

1902

||

պրակտիկ արվեստի



19 APR 2010
20 APR 2006

19 NOV 2010

84-3
10-48
ար.

ԵՂՄՈՆ ԹԵՌԻ

82


Վ Ա Ր Ժ Ա Պ Ե Տ Ը



Յրանա. թարգմ. ԼՆԻՈՆ Մ.Ս.Գ.

4709

արձանագրության համար



Թ Ի Ց Լ Ի Զ

Տպարան Տ. Մ. Ռոտինեանցի

1902

118 APR 2013

3005 89A 05

6013

Дозволено цензурою Тифлпст. 5-го Октября
1902 г.

Վ Ե Ր Ժ Ա Պ Ե Տ Ը

Ա

- Ո՞վ ապրի:
- Ֆրանսիան:
- Անցնել չի կարելի:
- Սակայն ձեր մեծաւորին ասելու բան ունիմ:
- Ուրեմն սպասեցէք այդտեղ:

Այդ համառօտ խօսակցութիւնը տեղի ունէր՝ 1870 թուականի նոյեմբերի 14-ի գիշերուայ տասնութէկ ժամին, Փրանսիական Լուսուի 16-րդ չառաջադահակի և մի քսանուվեց-քսանուեօթը տարեկան երիտասարդի միջև:

Պահակն իմաց տուաւ բանակի լիսնապետին, որ քանիմի բոպէից լետոյ երեաց վիշապեան չորս թիկնապահով:

- Ո՞վ ապրի, կրկնեց սպան:
- Ֆրանսիան, նորից պատասխանեց երիտասարդը:
- Ի՞նչ էք կամենում:
- Ձեր մեծաւորին ներկալանալ:
- Դրա համար լօրջ պատճառ ունի՞ք:

— Լուրջ և ստիպողական:

— Շատ բարի. բայց դեռ պէտք է ձեր աչքերը կապենք, որ ապա թէ ներկայանաք:

— Կատարեցէք, ինչ որ պէտք է, միայն թէ շուտ:

Ապա ի նշանով զինուորներից երկուքը երբ ձիերից իջան և թաշկինակով կապեցին երիտասարդի աչքերը, լիսնապետն անմիջապէս քայլերն ուղղեց դէպի այն կացարանը, ուր մեռւմ էր հազարապետ Առքիէն՝ Գամբրոն փոքրիկ զիւղում զետեղուած լրտեսող գումարտակի հրամանատարը:

Այդ գումարտակը, որ բաղկացած էր մօտ հարիւր հեծեակից, պատուէր էր ստացել հսկել թշնամուն և նրա ամեն մի շարժումը զիտել: Նրբ լիսնապետը ներս մտաւ, հազարապետը, որ նոր էր վերջացրել գիշերուայ համար հրամաններ տալը, պատրաստվում էր հէնց շորերով պառկելու սենեակի լատակին փռած լարդալից կոշտ անկողնու վրայ:

— Ի՞նչ էք կամենում, զիմեց ներս մտնող ենթասպային:

— Պարոն հազարապետ, — պատասխանեց ենթասպան, — ձեզ մօտ մի տեղացի երիտասարդ եմ բերել, որ մօտենալով մեր լառաջպահակին, փափագ է յայտնել ձեզ հետ խօսելու:

— Ի՞նչ է ուզում ինձանից:

— Չգիտեմ, պարոն հազարապետ, այդ մասին կարող էք իրան հարցնել. նա սպասում է դռանը:

— Ներս բերէք:

Յիննապետը ներս բերելով երիտասարդին, ինքը հեռացաւ կից սենեակը, որտեղից հեշտութեամբ կարող էր լսել, եթէ մեծաւորը ձայն տար:

Հազարապետի հրամանով երբ անձանօթը բաց արաւ իր աչքերի կապը, նրանք մնացին երես առ երես և միքանի բոսպէ լուռ զիտեցին իրար:

Անձանօթի երեսնարքը այն պարզ դէմքերիցն էր, որոնք հէնց առաջին անգամից հաճելի տպաւորութիւն են անում տեսնողի վրայ: Նրա խոշոր աչքերը, որոնց մէջ անկեղծութիւն էր փայլում, վստահութիւն էին ներշնչում. միւսնոյն ազդեցութիւնն էին անում զիմացինի վրայ նաև նրա՝ միքիչ հաստ շրթունքները, որոնք, կարծես, բացւում էին միմիայն ճշմարտութիւն ասելու համար:

Հազարապետը մօտ երեսուն տարեկան մի տղամարդ էր, որի այրական ու եռանդալից դէմքը քաջասրտութիւն և վճռականութիւն էր արտայայտում:

— Ի՞նչ էք կամենում, վերջապէս զիմեց անձանօթին:

— Պարոն հազարապետ, — պատասխանեց երիտասարդը, — եկել եմ մի շատ կարևոր տեղեկութիւն հաղորդելու:

— Խօսեցէք, լսում եմ ձեզ:

— «Այստեղից մօտ չորս մղոն հեռու գտնուող Տ* գիւղի զպրոցի վարժապետն եմ, — ալսպէս սկսեց երիտասարդը. — բայց միաժամանակ կատարում եմ նաև իրնական դատարանի գրագրի պաշտօնը: Այսօր

կէսօրից յետոյ մեր փոքրիկ գիւղն եկաւ պրուսական մի ջոկատ, որին առաջին անգամն էինք տեսնում: Որովհետեւ գիւղապետը հիւանդ պառկած է, իսկ օգնականը գիւղից բացակայ, այդ պատճառով ես հարկադրուած եղաւ պատասխանել ջոկատի հրամանատար աւագ-սպայի հարցերին: Կնձ տեսնելուն պէս նա հարցովործ արաւ մեր գիւղի ունեցած միջոցների, քանի տնուոր լինելու, քանի ախոռ ունենալու մասին, ապա ասաց որ իրան առաջնորդեմ փօստատուն: Այդտեղ նա տեղեկութիւններ ժողովեցեղած լրագրներից ու նամակներից և միւս սպաների հետ գնաց շինական դատարան, ուր եկել-սպասում էին արդէն մնացած սպաները: Անմիջապէս մի փոքրիկ խորհուրդ կազմեցին, որի միտքը շատ լաւ հասկացաւ...:

— Ուրեմն դուք գերմաներէն գիտէք, ընդհատեց նրան հազարապետը:

— Պարոն, ես լօռենցի եմ. այդ լիզուն բաւական ընտանի է ինձ:

— Շարունակեցէք ձեր խօսքը:

— Ենթանց խօսակցութիւնից իմացաւ, որ եկել են լրտեսելու մեր գիւղը, ուր պէտք է գիշերեն: Սակաւն նրանց այդ կարծ միջոցով մնալն իսկ բոլորովին շուարեցրել ու անել գրութեան մէջ է գրել մեր խեղճ գիւղացոց, որովհետեւ հինգ հազար ֆրանկ պատերազմական տուգանք և ամեն տեսակ պաշարեղէն են պահանջում նրանցից:

«Գերմանացիք ստիպեցին ինձ, պարոն, անից

տուն շրջել և չալտնել բնակիչներին, թէ իրանցից պահանջվում է, որ այդ դրամն ու պաշարեղէնը առաւօտեան վաղ-վաղ տանեն շինական դատարան:

«Սկզբում ես բացէիբաց մերժեցի այդ՝ միանդամալն անարդարացի պահանջը. բայց նրանց սպառնալիքը՝ թէ գիւղը աւարի կ'առնենք, հարկադրեց ինձ հնազանդուել:

«Սակաւն այս բոլորը չէ:

«Մեր գիւղացոց դառն քրտինքի գինը— քսան խեղճ գերդաստանի ունեցած-չունեցածը պահանջելուց յետոյ, գերմանացիք տեղաւորուեցին աւելի գեղեցիկ տների մէջ և նրանց տէրերին ստիպեցին իրանց տալ մառաններում ունեցած լաւ բաները, որից յետոյ սկսուեց մի լիտի կերուխում:

«Այդ մի կատարեալ ղժբաղդութիւն եղաւ անց գերդաստանների համար, որոնց չարկի տակ ջահէլ կանալք կալին, անց եղբոր համար, որ կամենում էր իր քրոջ պատիւը պաշտպանել, անց ամուսնու համար, որ թող չէր տալիս անպատուել իր կնոջը... Օ՛, գերմանացիք շատ անզուժ բնաւորութեան աէր են, իսկ հարեածութիւնը նրանց խպառ կատաղի գաղաններ էր դարձրել:

«Նս տեսաւ, պարոն, ես իմ աչքով տեսաւ, թէ ինչպէս թրի պատեանի հարուածներով դուրս վաճըղեցին մի ղժբաղդ ձերուսու իր սեպհական տանից, որովհետեւ կամենում էր պաշտպանել իր 16 տարեկան թոռան պատիւը: Այդ քսամնելի տեսարանից յետոյ ելբ տեսաւ սպիտակահեր ձերուսուն՝ դող-

գոջուն բաղուկները դէպի երկինք տարածած ու իր խորշումած աչտերի վրայից արտասուքը հոսելիս... սաստիկ զայրութից քիչ մնաց սիրտս սլալթի. ուստի երգուեցի՝ դժբաղդ հայրենակիցներին վրէժը լուծել և ալդպիսով ազատել նրանց բոլորովին կործանուելուց:

«Այդ մտադրութեամբ մանրամասն տեղեկութիւններ ժողովեցի գերմանացոց զբաւած տներին մասին. նկատեցի որ նրանց պահպանութիւնը շատ թույլ է, իսկ պահակները կիսահարթած դրութեան մէջ են. մէկ խօսքով՝ շատ հեշտութեամբ կարելի կը լինի լանկարծակիի բերել նրանց: Երբ մեր գիւղի նամակարերից էլ տեղեկացայ Ֆրանսիական լառաջապահ-գնդի ճիշտ տեղը, եկալ որ գիտեցածներս հաղորդեմ ձեզ»:

— Ի՞նչ նպատակով, — հարցրեց սպան, որին շատ էր յուզել երիտասարդի սրտաշարժ պատմութիւնը:

— Այն նպատակով, որ լսելի անեմ և ճանապարհ ցոյց տամ նրանց, որոնք կը կամենային ինձ հետեւել:

Հաղարարպետը մնաց լուռ. նա իր թափանցող հայեացքը մի րոպէաչափ բեռեց ուսուցչի՝ անկեղծութիւն արտայայտող դէմքի վրայ, և սակայն ալդ արագ զննումն իսկ բաւական եղաւ համոզելու նրան՝ թէ ուսուցչի խօսքերը ճշմարիտ են: Բայց հարցը այնքան ծանրակշիռ էր, որ անհրաժեշտ էր աւելի լուրջ հարցուփորձ:

— Սակայն քննչպէս իմանամ, սիրելի բարեկամ, — դիմեց երիտասարդին, — թէ դուք ճշմարիտ էք ասում. քննչպէս կարող էք կարծել, որ մի սպան, հիմնուելով որեէ հասարակ տեղեկութիւնների վրայ, կը համաձայնի վտանգի ենթարկել իրան վտահացած զինուորների կեանքը. վերջապէս քննչ և քաջխաւորութիւն էք տալիս՝ ձեր ասածները հաստատելու համար:

— Կեանքս, պնդոն հաղարարպետ:

— Ձեր կեանքը... Այժմ հաւատում եմ, որ ճշմարիտ են ասածներդ: Սակայն քննչպէս կարող էք ապացուցանել, թէ գերմանացիք թույլ կը տան լանկարծակիի բերել իրանց: Գիտէք արդեօք, թէ քանի հոգի են նրանք:

— Այն, գիտեմ. նրանք ընդամենը երեսուներեք հոգի են, որոնցից մինը աւագ-սպալ է, իսկ չորսը ենթասպալ: Այդ երեսուներեք հոգին ցրուած են հինգ զանազան տներում: Այն էլ գիտեմ, թէ քննչ է նրանց մտադրութիւնը. լուսարացին պէտք է հեռանան գիւղից: Հիմա, այս ժամից, նրանց մեծ մասը հարթած-շնթռկած է, իսկ միւս փոքրաթիւ մասը գեռ շարունակում է իր զեզլու կերուխումը. բայց հաստատ է որ ամենքն էլ իրանց ապահով են համարում անակնկալ պատահարից: Ուրեմն չպէտք է լիտաձգել, պնդոն հաղարարպետ. ձեր կողմից բաւական է միայն մի վտահ՝ քալ և՛ առանց մի հատ գնդակ իսկ արձակելու երեսուներեք զերմանացի զերի կը բռնէք: Հիմա, այս գիշեր,

չաջողութիւնն անկասկած է, բայց վաղը ուշ կը լինի: Ասածներէս իբրև երաշխաւորութիւն՝ ինձ կանպէս տուէք մի ձիու վրայ և թողէք երկու ձիաւոր զան իմ երկու կողմից: Եթէ ասածներս սուտ զուրբ զան, եթէ անթաղութիւնս կէտ աւ կէտ չկատարուի, հրամայեցէք ուղեկոս ցրիւ տալ:

Այլ եռանդագին խօսքերն արտասանելիս ազնիւ երիտասարդի գոյնը թռաւ ներքին շուքմունքից:

Հազարապետին այնպէս էր թվում, թէ իր առջև կանգնած երիտասարդը՝ Փրանսիական մեծ չեղափոխութեան այն քաջարի հայրենասէրներէն է, որոնք արիւթաբար առաջ էին տարել ազգի պաշտպանութեան փառաւոր գործը, գործ՝ որի համար իրանց անձը չեն խնայել ազգութեան նեցուկ համարուած հերոս նախնիքը:

Ջգածուած ու գրառուած վարժապետի այրա կան ազգու շեշտից, հազարապետը, երկու ձեռքը մեկնելով երիտասարդ լուենցուն, բացականչեց.

— Իրաւ որ դուք մի լաւ երիտասարդ էք:

Ապա լսածները ի մի ամփոփելով իր մտքի մէջ՝ իբր պատկերացրեց բոլոր հանդամանքները, նա միքիչ վարանեց. որովհետև ինքը միայն պաշտպանողական գիրք պէտք է բռնէր Գամբրօն գիւղում, ինքը պարտաւոր էր միայն հսկել թշնամու շարժումները. սպայապետի հրամանների մէջ լարձակման մասին ոչինչ չկար ստուած... Բայց արդեօք

ինքը մեղանշած չի լինիլ, եթէ մի այդպիսի սիրուն պատեհ առիթը ձեռքից բաց թողնէ:

Նա այլևս չէր կասկածում վարժապետի վրայ, այլ միայն զգում էր որ շատ բարեպաշտ առիթ էր ներկայանում իրան: Անկասկած էր նաև, որ գումարտակն զգալի կորուստ չի ունենալու: Բացի դրանից, ո՞վ իմանալ՝ արդեօք մի այդպիսի սիրուն բարեպաշտ գիպուած նորից կը կրկնուի:

— Գնանք, — արտասանեց նա արագութեամբ և վերջ տուաւ իր խորհրդածութիւններին. — ո՞վ որ փորձանքների մէջ չի ընկնում, նա չի կարող որեւէ բանի լուսալ: Շատ ճիշտ է ստուած, թէ «Բազըը համարձակների բաժինն է»:

Ապա կանչելով կից սենեակում իր հրամանին սպասող ենթասպային, խաղաղ ու հաստատուն ձայնով ասաց.

— Գիւղում փոշ փչել տուէք, իսկ սպաներին էլ լայտնեցէք, որ կէս ժամից լետու մենք պէտք է մեր ձիերի վրայ լինինք:

Բ

Սկզբիցու հին ժամացույցը կէս գիշերուայ ժամն էր խիտ մ, երբ իսուսն հոգոց բողկացած վիշապեան ջոկատը թողեց գիւղը:

Ջոկատի հրամանատարն էր ինքը Առքիէ հազարապետը, հետն ունենալով օգնական մի լիէտը—

նան, երեք լիանապետ և հինգ տասնապետ: Առաջին օգնական լիեօտընանը, մի ենթասպայ և զուգարտակի միւս անդամները մնացին Գամրոնում, որոնք պէտք է պատրաստ շտաբներին՝ հէնց առաջին նշանին ձի նստելու:

Այդ զօրախմբակը՝ ունենալով լառաջապահներ քանիմի խուզարկիչներով, ինչպէս նաև վերջապահներ, սկսեց առաջ խաղալ անձրևաջրից փափկացած ճամբով:

Գիշերը մութն էր և ցուրտ. ձիւնախառն անձրևը, որ հիւսիսի սառը քամին բերում խփում էր զինուորների երեսին, թէպէտ աւելի ևս տաժանելի էր դարձնում ուղին, բայց և այնպէս նրանք անարգել առաջ էին գնում, որովհետև վարժապետը՝ որի մի կողմից հազարապետն էր գնում, միւս կողմից մի ենթասպայ, մթութեան մէջ առաջնորդում էր նրանց:

Որտեղ ճանապարհը ներում էր, նրանք արագացնում էին ձիերի ընթացքը: Վերջապէս երկու ժամաչափ մեծ զժուարութեամբ ճամբալ կտրելուց լետով, նրանց ուղեցուցը չալտնեց, որ մօտեցել են Տ* գիւղին:

Հազարապետն իսկոյն հրամայեց իր մարդկանց կանգ առնել. արագութեամբ անցաւ նրանց չարքերի առաջից և խիստ լուսթիւն պատուիրեց:

— Հրացան չարձակէք, — ասաց նա ցածր ձայնով, — ալ թուր բանացրէք, եթէ հարկ լինի: Լսում

էք. առանց իմ հրամանի ոչ մի հրացան չպէտք է արձակուի:

Գիւղից մօտ հինգ-վեց հարիւր մետր հեռու նորից կանգ առան. Հազարապետը քառասուն հոգի ջոկեց, որոնք իջան ձիերից, ինչպէս նաև վարժապետը. իսկ մնացած տասը հոգին որպէս պահեստ, մի լիեօտընանի հրամանատարութեամբ պէտք է պահպանութիւն անէին զինակիցների ձիերին:

Հետևակները զարաբիւնաների ոտը բարձրացրած և մերկացրած սրերով՝ վարժապետի ու հազարապետի առաջնորդութեամբ սկսեցին առաջանալ դէպի Տ* գիւղը:

Կատարելիք առաջին՝ վտանգաւոր և թէ խիստ կարևոր գործը գերմանացի պահակին տիրելն էր. ուստի և փոքրիկ զօրախմբակը ամենից առաջ դէպի այն տունը զիմեց, ուր պահակն էր:

Ամեն մի պահակ՝ իւրաքանչիւր ժամը մէկ անդամ պէտք է փոխուի, և թէպէտ գերմանացի պահակն իր տեղումն էր այդ բոսէին, բայց քնած էր մի քարի վրայ նստած: Այդ նրա վերջին քունը եղաւ, նա ալլևս չզարթեց. թրի մի հարուած տեղնուտեղը պատին կպցրեց նրան:

Առանց որևէ աղմուկի պահակին տիրելուց լետով, լարձակուողները մտան սրահը, ուր տասը գերմանացի զինուորներ՝ անչափ խմելուց, գէտուղէն վալր թափուած խումիում էին, դրանք երբ քնից զարթեցին, արդէն զինաթափ ու կալանաւորուած էին:

Ներիտասարդ լուսնացու միջոցով հաղարապետը չափանց նրանց, որ կեանքները իրանց հնազանդ լինելուցն է կախուած:

Այդ առաջին կալանաւորներին զէնքերն անմիջապէս պահեստին լանձնուեցին, որոնց վրայ պահապան կարգուեցին մի լիսնապետ և վիշապեան վեց զինուոր՝ շարաքինաները ձեռքներին պատրաստի բռնած:

Զօրախմբակր նոյն չաջողութեամբ տիրեց թշնամու բռնած հինգ տներից չորսին ևս: Վարժապետն անսխալ կերպով մատնացուց էր անուժ գերմանացոց տեղը, իսկ վիշապեան զինուորներն արդէն գիտէին իրանց անելիքը. երբ մտնում էին մրափած պրուսացիների կացարանը, առաջ ու առաջ ձեռք էին գցում նրանց զէնքերը և ապա թէ արթնացնում:

Պրուսացի զինուորներն ու իրանց սպաները, հարբածութիւնից առաջացած խիստ խորը քնից անզգալացած լինելով, ոչ մի ընդդիմադրութիւն չէին անում:

Ֆրանսիացիների գալուց մի կէս ժամ լետոյ արդէն քսանուինը (չհաշուած սպանուածը) գերմանացի էր լանձնուած պահակին, որի պահապանների թիւը հեազհետէ քառասպատկուել էր:

Վերջին տունը, որի մասին նոյնպէս տեղեկութիւն էր տուել վարժապետը, գտնվում էր գիւղի ծայրին: Այնտեղ գնալիս ֆրանսիացիք լուսնակա-

տեցին տան ներսը, որտեղից պարզ լուսւմ էին քէֆ անողների աղաղակները:

Այդ տան դռան առաջ մի մարդու դիակ կար ընկած: Ներիտասարդ լուսնացին կուցաւ դիակի վրայ, որ լաւ տեսնի ու մի սարսուռ ազդող ճիչ սրձակեց...

Տունը պատկանում էր աչն գժբաղդ ձերուհուն, որին պրուսացիք թրի պատեանի հարուածներով դուրս էին վաճեղձ թողան պատիւը պաշտպանել ուղեւուն համար:

Անբաղդ ձերուհին գիտէր որ իր մատղաջ թոռը արբած զինուորների գրկումն է, ուստի կրկին լետ էր եկել, որպէսզի գոնէ այս անգամ ազատի նրան անպատու թիւնից. բայց չկարողանալով ներս մտնել՝ բարկութիւնից, վշտից ու սաստիկ դայրութից արիւնը գլխին էր խփել ու շանթածար կաթուածից վայր ընկել անշնչացած:

Հագարապետի հրամանով մի քանի զինուոր խոկոյն ուսները դէմտուին ներսից փակուած դռանը և խորտակեցին:

Ներս մտնողների առաջ մի քստմնելի տեսարան բացուեց. սենեակի մէջ վերին աստիճանի անկարգութիւն էր տիրում. — պահարանները տակնուվրայ, կահ-կարասիքը կոտրատուած, ապակիները փշրուած-թափուած լատակի վրայ, դէսուղէն շարտած դատարկ շշեր, որոնցից մի քանիսի բերաններին՝ ծուխ արձակող մոմեր էին վառվում: Սենեակի ամբողջ չտակը ապականուած էր աչնալի-

մի աղտեղութիւններով, որոնք ցոյց էին տալիս թէ ինչ ու ինչ վնթի բաներ էին կատարուել...

Սակայն այդ դեռ ամենավատթարը չէր զգուելի տեսարանից:

Ահնեակի անկիւններից մէկում չորս հարբած զերմանացի վիճում էին իրար հետ անբաղդացած պատանուհու համար, որ առանց զգեստի էր, իսկ գեղեցիկ մարմնի վրայ անզուժ բռնութեան հետքեր էին երևում...

Հէք աղջիկն այժմ ալևս չէր զիմադրում, ընդհակառակը՝ նա ծիծաղում էր իր անխիղճ զահիճների արտասանած անպարկեշտ խօսքերից: Բայց նրա այդ ծիծաղը նման էր մետաղէ տախտակի թրթռոցին, իսկ կուսական հալեացքը կորցրել էր իր նախկին պայծառ արտայայտութիւնը... Խեղճը սարսափից խելագարուել էր:

Ֆրանսիացիների երևալը զգաստացրնց գերմանացիներին, որոնք անմիջապէս թողնելով իրանց զօճը, կամեցան զէնք վերցնել:

Հազարապետը հէնց այդ բանին էր սպասում: Նրա մի նշանով ուժ հրացան միասին թնդացին և տմարդի արարածները գլորուեցին լատակի վրայ՝ իրանց արիւնը ևս խառնելով իրանց աղտեղութիւնների հետ...

Պապի ու թռռան վրէժը լուծուած էր:

Գ

Առաւօտեան վեց ժամին հաղարապետ Առքիէն կարգի բերաւ իր զօրախումբը: Գերմանացիներին առան իրանց մէջ, որպէսզի նրանք փախչելու փորձ չանէին, նրանցից խլած զէնքերը դարսեցին մի սալի վրայ ու հինգ զիակն էլ մի ուրիշ սալի վրայ ղնելով՝ սկսեցին հետեւել իրանց լառաջապահներին: Իսկ ձեռք գցած երեսունուհինգ ձին ալ զէն ուղարկել էին բեզեառ դուրս բերուած գիւղացոց ձեռքով:

Վարժապետը լալանեց թէ մի գերի պակաս է: Եւ ուղիղ որ. քսանուինը կենդան ու հինգ էլ մեռած միասին անում էին երեսունուչորս, մինչդեռ վարժապետը երեսունուհինգ էր հաշուել. իսկ երեսունուհինգերորդ ձին ապացոյց էր նրա հաշուի ճիշտ լինելուն:

Ուրեմն պարզ էր թէ պրուսացիներից մէկը չկար՝ փախել էր. Ալդ փախտտականին գտնելու համար արուած բոլոր խուզարկութիւնները զուր անցան:

Հազարապետը մտածեց որ այդ փախտտականը երևի հիմա հասած պիտի լինի թշնամու լառաջապահներին: Ալդ միտքը ստիպեց նրան՝ իրանց երթը փութացնելու. որովհետեւ եթէ ճիշտ լինէր իր ենթադրութիւնը, այն ժամանակ գերմանացիք, լուր առնելով Տ* գիւղում անցած-զարձածի մասին, կը շտապէին զալու աւելի մեծ բաղմութեամբ: Բայց նախքան Տ* գիւղից հեռանալը, հաղա-

1001
1074



բայետը ցանկացաւ քաջ լօռեցուն իրանց հետ տանել:

—Նրիտասարդ բարեկամ, եկէք գնանք մեր բանակը, — ասաց նա վարժապետին. — թշնամին կարող է ձեզ շատ նեղել այստեղ, մինչդեռ մեր բանակում դուք բոլորովին ապահով կը լինիք:

—Յատուկ շնորհակալ եմ ձեր այդ առաջարկութեան համար, — պատասխանեց երիտասարդ հայրենասէրը. — այսօր աւելի, քան երբևիցէ, ես պարտաւոր եմ անստեղ մնալ:

—Դուք բաւական դորժ կատարեցիք ձեր զիւղի համար, ուստի արժանի էք որ ձեր արածի փոխարէն հատուցումն ստանաք: Եկէք գնանք Դամբօն, մեր սպարապետին ներկայացնեմ ձեզ:

—Անկարելի է, պնդոն հաղարապետ. իմ տեղն անստեղ է: Նա որեէ հատուցումն ստանալու միտք չեմ ունեցած. ինչ որ արի, զրանով միայն պարտքս կատարեցի և հիմա էլ պարտաւոր եմ անստեղ մնալ:

—Բայց մնալով այստեղ, դուք վտանգի էք ենթարկում ձեր կեանքը:

—Ո՛չ, ես միայն իմ պարտականութիւնն եմ կատարում զէպի մեր հասարակութիւնը, որի բարօրութեան համար պատրաստ եմ կեանքս էլ զոհ բերելու: Ազնիւ մարդը՝ տանջանքի անից և կամ մահուան երկիւղից չի փախչիլ իր պարտականութիւնը կատարելուց:

—Ձեր պարտականութիւնը համազիւղացիներիդ կործանումից ազատելն էր. այդ բանը ճօ

ձեզ լաջողուց. այլևս զրանից աւելի ինչ էք կամենում անել:

—Ուզում եմ հոգալ այն անբաղդ աղջկայ մասին, որին որբացրին պրուսացիք: Պարտականութիւններիցս մինն էլ այդ է, ուստի պիտի աշխատեմ, եթէ հնար է, այդ ևս ճշտութեամբ կատարել:

—Դուք ոչ միայն լաւ Փրանսիացի էք, այլև մի ազնիւ մարդ, հասարակութեան ընտիր և օգտակար անդամ. ուրեմն թո՛ղ օրհնուի ծնունդդ: Նրանի կըլլինէր այն օրը մեր աղգին, երբ հասարակութեան ամեն մի անդամ ձեզ պէս մտածէր ու գործէր... Այո, թո՛ղ օրհնուի ձեզ պէսների ծնունդը, — լուզուած բացականչեց հաղարապետը և զիրկն առնելով երիտասարդ հերոսին, ջերմազին համբուրեց նրա անարատ ճակատից. ապա ձի նստելով, հրամայեց շտապել:

Փոքրիկ զօրախումբը վերադարձաւ նոյն ճամբով, որով եկել էր զիշերը:

Յրանսիացիք, առանց մի հատ մարդ անգամ կորցնելու, գերիների հետ հասան Դամբօն առաւօտեան տասը ժամին, այսինքն ճիշտ այն միջոցին, երբ գերմանական մի ստուար զօրախումբ մտաւ Տ* զիւղը: Այդ նորեկ խմբին առաջնորդել էր այն փախստականը, որին գտնել չկարողացան Փրանսիացիք:



Հաղարապետ Առքիէն գումարտակի մեծաւորի սասիճան ստացաւ և Պատուոյ Լէզէոնի շքանշանով զարդարուեց կուրծքը, իսկ ուր հարկն էր՝ արձանագրուեց զօրախմբի անունը:

Տ* գիւղի բնակիչներէց մի ցածահոգի անպիտան՝ մեռցնելով իր խիղճը, մի զզուելի գործ կատարեց. նա մատնեց աղնիւ վարժապետին, այսինքն ան մարդուն, որ իր կեանքը վտանդի ենթարկելով՝ ամբողջ գիւղի աղատիչն էր եղել:

Գերմանացիք՝ զինուորական դատարանով մահուան դատապարտեցին երիտասարդ հայրենասէրին:

Այն իսկ օրը, երբ Առքիէ հաղարապետն իր ծառայութեան հատուցումն էր ստանում, հէնց միևնոյն օրն էլ պրուսացոց գնդակներէից ընկաւ լուռնցի աղնիւ հերոսը, որով սուրբ գործի - հայրենիքի ազատութեան համար ընկած նահատակների թիւը մէկով ևս աւելացաւ:

Թող լաւ էտ անմուսաց մնաց այդպիսիների վիշատակը:

Քանիմի օրից չետոյ գիւղից դուրս մի մեծ ծառի տակ մատնիչ գիւղացու գիակը դտնուեց. նրան խեղդամահ էին արել իր համազրուղացիք՝ որպէս արդար վրէժ հայրենասէր վարժապետի մահուան:

Արտաստպուած «Առմայ» հանդիսից:



Իմ թարգմանութեամբ եւ փոխադրութեամբ

Լոյս են տեսել:

1. ՓՍՏԱՇԷՆ ԽՐՃԹԻՅ ՄԻՆՁԵՒ ՍՊԵՏԱԿ ՏՈՒՆԸ, պատկերադրդ, ամեն հասակի համար: (Սակաւաթիւ): Գինն է — 60 կ.
2. ՖՐԻՏԵՅԻՑ ԴԻՅԱՋՆ, պատկերադրդ, ամեն հասակի համար: (Սակաւաթիւ):
3. ԱՋԲԱՅԱԻԸ ԵՒ ՆՐԱՆԻՅ ՀԵՌՈՒՄՆԱՆՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ (Սպառուած):
4. ՉԻՆԱԿԱՆ ԵՂԻՆՋՐ ՄՇԱԿՈՒԹԻԻ (Սպառուած):
5. ԲԱՐԱԿԱՅԱԻ ԹՈՒԲԱԽՏ (Հրատ. կով. կայս. Բժ. Ընկերութեան):
6. ԵՐԵՔ ՎԷՊԻԿ, — ա. Մայրական սիրտ, ր. Առանձին, գ. Վրէժ, երիտասարդների համար: (Միքանի օրինակ) Գինն է 20 կ.
7. ԳԻՒՂԱԿԱՆ ՎԱՐՃՈՒՀԻ, ժողովրդական: Գինն է 25 կ.
8. ԱՆԵՐԵՒՈՅԹ ՀՈՂԱԳՈՐԾ, ըստ Չ. Դար վինի, պատկերազարդ, ամեն հասակի համար: Գինն է 7 կ.
9. ՎՐԷՅԺ, ԳԻ ԴԸ-Մօսկաանի, և ՀԻՒԱՆՊԱՊՈՂ ԱՂՋԻԿԸ, Ֆր. Կօպպէի, ժողովրդական: Գինն է 5 կ.
10. ԲՆԻ ԵՒ ՋՈՒՒ ՈՐՍ, մանկական: Գինն է 5 կ.
11. ԵՐԿՐԱՇԱՐԺ ԵՒ ՀՐԱԲՂԻԱՅԻՆ ԼԵՌՆԵՐ,

- ժողովրդական: Գինն է 10 Կ.
- | | | |
|----------------------|---|----------------|
| 12. ԱՆԳԱՐԳ ԶԱՆԷՍԸ | } Մանկական, բո-
լորն էլ շքեղ
պատկերներով: | } 10-ական կոպ. |
| 13. ԿԱՐԷՆՆ ՈՒ Մանէնը | | |
| 14. ԵՕԹՆ ԱԳՈՍԻ | | |
| 15. ՊՍՏԻԿ ՈՒ ՃՍՏԻԿ | | |
16. ԽԺՌՈՂՆԵՐ, պատկերազարդ, ամեն հա-
սակի համար: Գինն է 50 Կ.
17. ԻԳՆԱՏԻՈՍ ԼՈՅՈԼԱ (իր պատկերով),
ժողովրդական: Գինն է 30 Կ.
18. ՎԱՐԺԱՊԵՏԸ, ժողովրդական: Գինն է 5 Կ.

Վերոյիշեալ գրքերից ձեռք բերելու հա-
մար պէտք է դիմել Թիֆլիզի «Գեղարդնա-
կան» եւ «Գուտտեմքեր» գրապատասխանոցնե-
րին, ըսցի «Երեք վէպիկից», որի համար
պէտք է դիմել ինձ:

Левону Вардани Меликъ-Адамьянъ.
Тифлисъ, Орбелиановская ул. д. № 24.

Գ Ի Ն Ն Է 5 Կ.

«Ազգային գրադարան»



NL0301947

6013

